

# Կ Ա Ր Ծ Ի Ք

ՀՀ կառավարության որդեգրած կենսաթոշակային  
բարեփոխումների քաղաքականության, դրա նպատակների ու  
իրականացման որոշ հարցերի վերաբերյալ

Հեղինակ՝ Գարիկ Խաչիկյան  
Էլ. փոստ՝ [gkhachikyan@yahoo.com](mailto:gkhachikyan@yahoo.com)

ՎԵՐԱՊԱՀՈՒՄ. Կենսաթոշակային հանդիսանում կենսաթոշակային ոլորտի փորձագետ, և սույն նյութի շրջանակներում փորձում է միայն հանրությանը հայտնի տեղեկատվության հիման վրա և ելնելով թեմայի վերաբերյալ սեփական իրազեկվածությունից՝ ներկայացնել իր անձնական դիտարկումներն ու եզրահանգումները:

## 1. Խնդիրը

Հայտնի է, որ ներկայումս ՀՀ-ում ներդրվում է որակապես նոր տեսակի կենսաթոշակային համակարգ: Այն իր դրական կողմերով հանդերձ խիստ դժգոհությունների պատճառ է դարձել, հատկապես աշխատաշուկայում ներգրավված մինչև 40 տարեկան երիտասարդների կողմից, որոնց վրա այդ բարեփոխումներն փաստացի ամենամեծ բացասական հետևանքները կունենան:

Սակայն մինչ այժմ հիմնական դժգոհությունները հիմնավորվում են, օրինակ, ապագա կենսաթոշակային համակարգի կառուցակարգերի, դրանցում ընդգրկվողների շրջանակի վերանայման, տարբեր առաջնահերթություն համարվող ոլորտներում (օրինակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ) այն չտարածելու անհրաժեշտությամբ, կենսաթոշակային վճարների բարձր լինելու հանգամանքով, և այլն: Սակայն այս բոլոր փաստարկները կարելի է հեշտությամբ և խելամտորեն չեզոքացնել, ինչը և անում են ՀՀ իշխանությունները տարբեր մակարդակներում: Այդ իսկ պատճառով, շեշտադրումները պետք է ավելի ճիշտ դնել և նայել խնդրի արմատին՝

**Հիմնական խնդիրն իրականում կապված է ոչ թե բուն նոր պարտադիր կուտակային համակարգի թերությունների կամ վատը լինելու հետ (այն առայժմ գոնե թղթի վրա լավ է նախագծված), այլ այն պետք է փնտրել եկամուտների հարկման քաղաքականության, մասնավորապես՝ կենսաթոշակային բարեփոխումների առաջին փուլում իրականացված հարկային դաշտի փոփոխությունների մեջ (միասնական եկամտային հարկի ներմուծում), և համապատասխան լուծումներն էլ պետք է փնտրել հենց այդտեղ:**

Սույն նյութի մեջ հիմնավորվում է հենց վերը նշված թեզը՝ ցույց տալով, թե ինչպես է կառավարությունը կարողացել «հանճարեղ» կերպով, մոլորեցնելով ու թյուրիմացության մեջ զգելով իր քաղաքացիներին, ավելացնել քաղաքացիների եկամուտների հարկման բեռը՝ նենգափոխելով կենսաթոշակային բարեփոխումների նպատակները, որը և ներկայումս պատճառ է հանդիսացել այդ (հնարավոր) դրական բարեփոխումների վերաբերյալ խիստ վատ վերաբերմունքի առաջացման:

Թեզի հիմնավորման նպատակով նյութում ներկայացվում են այն հիմնական դիտարկումներն ու դատողությունները, որոնք ցույց են տալիս կառավարության որդեգրած քաղաքականության և դրա իրականացման թերություններն ու ներքին տրամաբանական հակասությունները՝ արդյունքում հաստատելով թեզի ճշմարտացի լինելը:

## 2. Հիմնական դիտարկումներ և մեկնաբանություններ

Հայտնի է, որ ՀՀ-ում կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում փոփոխություններ են իրականացվել նաև հարկային համակարգում: Ներդրվել է միասնական

եկամտային հարկ, որը փոխարինել է նախկինում վճարվող եկամտահարկին, սոցիալական ապահովության վճարներին և գործատուի կողմից կատարվող սոցիալական վճարներին:

Բարեփոխումները իրականացվում են երկու մասով/փուլով՝ միասնական եկամտային հարկի ներդրում 2013թ. հունվարի մեկից և նոր կենսաթոշակային համակարգի գործարկում 2014թ. հունվարի մեկից:

## **2.1 Քաղաքականությունը**

Ընդունված քաղաքականության ենթատեքստում, որպես կենսաթոշակային բարեփոխումների նպատակ, առաջին փուլում որդեգրվել է **գործատուների կողմից հաշվետվությունների ներկայացման գործընթացի հնարավորինս պարզեցումը**: Ընդ որում, լուծվել են հետևյալ խնդիրները՝

- Նախկին երեք հաշվետվությունների փոխարեն՝ մեկ անձնավորված հաշվարկ.
- Անձնավորված հաշվարկը գործատուն հարկային մարմին է ներկայացնում բացառապես էլեկտրոնային եղանակով, ինչը էապես կրճատում է հաշվետվությունների քանակը, դրանց ներկայացման գործընթացները և ժամանակը:

Թե որքանով է հարկային վարչարարության խնդիրներով պայմանավորված հարկի դրույքաչափի փոփոխությունը տեղավորվում կենսաթոշակային բարեփոխումների նպատակների մեջ՝ ենթակա է հիմնավորման: Մեր կարծիքով, հաշվետվությունների թվի կրճատումը՝ որպես եկամտի հարկման դրույքաչափի փոփոխության նպատակ ամբողջովին արհեստական է, բացարձակապես դուրս խնդրո առարկա բարեփոխումների շրջանակից: Այն ընդհանրապես, ըստ էության, չի առնչվում կենսաթոշակային բարեփոխումների հետ, և հետևաբար այն պարզապես **վերաբերելի չէ**: Փաստացի, ստացվում է, որ այս նպատակի ընդունման անհրաժեշտությունը կապված էր միմիայն մեկ այլ, արտաքինից քողարկված նպատակի հետ՝

**«Տարալուծելով, միակցելով նախկին եկամտահարկը սոցիալական վճարների հետ՝ սահուն կերպով բարձրացնել աշխատողների՝ եկամուրների հարկումը՝ վերացնելով նվազագույն չհարկվող մեծությունը և դրույքաչափը դարձնելով 24.4%, 26% և 36%<sup>2</sup> (կախված եկամտի մեծությունից), ընդ որում, հնարամտորեն դրա ազդեցությունը զուտ փնտրելով եկամուրների վրա հետաձգել մինչև 2014թ. հունվարի 1»:**

<sup>1</sup> Տեքստում օգտագործվող քաղաքացի, աշխատող և նման այլ հասկացությունները եկամտային հարկի տեսակետից վերաբերում են բոլոր նրանց, ովքեր համարվում են աշխատանքային պայմանագրի հիման վրա եկամուտ ստացող հարկ վճարողներ:

<sup>2</sup> Տեքստում պարզության համար վերցվել է եկամտային հարկի միայն մեկ արժեքը՝ 26%. այդուհանդերձ նյութը վերաբերում է բոլոր արժեքներին:

Եթե նույնիսկ այս նպատակը չի երևում կառավարության որևէ քաղաքականությունում, այդուհանդերձ փաստացի առնվազն այդպիսի հետևանք է արձանագրվում:

Այսինքն, աշխատավարձ ստացող ՀՀ քաղաքացու համար եկամուտների հարկման **ԷԱԿԱՆ** ավելացումը հիմնավորվում է գործատուների մի քանի հաշվետվությունները մեկով փոխարինելու, ինչպես նաև այդ հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու խնդիրները լուծելու անհրաժեշտությամբ: Սա կատարյալ անհեթեթ հիմնավորում է, որի միակ մխիթարական կողմն այն կարող է լինել, որ միգուցե սրա շնորհիվ Հայաստանը «Doing Business»-ի ցուցանիշներն է բարելավել: Ընդ որում, էլեկտրոնային հաշվետվությունների համակարգից օգտվելն անվճար չէ:

Փաստորեն, կառավարությունը վարել և շարունակում է վարել ոչ թափանցիկ, ոչ հաշվետու (կամայական) և ոչ արդարացի քաղաքականություն կենսաթոշակային բարեփոխումների բնագավառում, երբ այդ բարեփոխումների անվան տակ փաստորեն ավելացրել է աշխատողների եկամուտների հարկման դրույքաչափը, որը չնայած քաղաքացու զուտ տնօրինվող եկամտի տեսակետից ներկայումս նվազեցման չի հանգեցրել, սակայն 2014թ. հունվարի մեկից էական նվազման պատճառ է հանդիսանալու, երբ սկսի գործել կենսաթոշակային պարտադիր կուտակային բաղադրիչը:

Այստեղ պետք է հետևյալ հարցերի պատասխանները ստանալ՝

- Կենսաթոշակային բարեփոխումների համատեքստում կատարվող և նրա մաս կազմող միջոցառումը (հարկային մասը), իր նպատակով ու լուծվող խնդիրներով, կարո՞ղ է **ԶՎԵՐԱԲԵՐԵԼ** «մայր» բարեփոխմանը:
- Հնարավո՞ր էր արդյոք ավելացնել հարկի դրույքաչափը՝ առանց այն շաղկապելու կենսաթոշակային բարեփոխումների նպատակի հետ:
- Ինչո՞ւ աշխատողները նախկինում չեն արձագանքել դրույքաչափի բարձրացման խնդրին:

Կարծում ենք, որ առաջին հարցի պատասխանը բացասական է, և արդյունքում պետք է արձանագրել, որ կառավարությունը, դիտավորյալ շփոթության մեջ գցելով հանրությանը և/կամ չուզենալով հաղորդակցել կենսաթոշակային բարեփոխման հարկային մասի իրական նպատակները՝ կարողացել է անաղմուկ բարձրացնել քաղաքացիների հարկային բեռը:

Երկրորդ հարցի համար դիտարկենք համակարգերի տեսությունը. դրա համաձայն՝ համակարգը մասերի ամբողջություն է իրենց ներքին պատճառահետևանքային կապերով ու այլ պայմանավորվածություններով: Համակարգի հիմնական հայտանիշերից է այն, որ եթե մի մասն անհաջողության է մատնվում, ապա դա անմիջական ազդեցություն պետք է ունենա ողջ համակարգի վրա, օրինակ՝ առաքելության ծախսողում: Եթե այդպիսի ազդեցություն չկա, ապա այդ մասը պարզապես չի պատկանում տվյալ համակարգին: Տվյալ պարագայում, հարկի դրույքաչափը կարելի էր բարձրացնել առանց որևէ կենսաթոշակային բարեփոխումների

իրականացման (և կարիք չկար դրա համար ծախսել մոտ 10 տարի, ներգրավել ֆինանսական և մարդկային զգալի միջոցներ՝ նախագծելու ներկայիս համակարգը, քանի որ եթե հնարավոր էր հարկային բեռն էլ ավելի մեծացնել, ապա դրանով իսկ փակվում էր կենսաթոշակային համակարգի կայունության հարցը): Եվ հակառակը, եթե նոր կենսաթոշակային համակարգը ինչ-ինչ պատճառներով չգործի, եկամտային հարկը շարունակելու է գործել (ներկայումս ունենք նման մի իրավիճակ, երբ չկա կուտակային համակարգը, բայց եկամտային հարկն արդյունավետորեն գործում է): Կրկին, ստացվում է, որ այդ ամբողջ բարեփոխումների մեջ հարկային մասն իրականում փոխկապակցված չէ կենսաթոշակային բարեփոխումների հետ, չկան դրանց միջև տրամաբանական կապեր, այլ դրանք միայն արհեստականորեն են շաղկապվել միմյանց հետ՝ քողարկելու հարկման բեռի փաստը:

Երրորդ հարցի պատասխանը թերևս կապված է այն հանգամանքի հետ, որ անձը սովորաբար հետաքրքրված է զուտ տնօրինվող եկամտի չափով, և դրա անփոփոխ մնալու պարագայում (գործատուն սոցիալական վճար կատարելու փոխարեն ավելացնում է անվանական աշխատավարձը) դժվար թե որևէ հարց, աղմուկ բարձրացնի: Մարդկանց այս վարքագծի հիմքում ընկած է նաև այն հանգամանքը, որ աշխատողը «պատասխանատվություն» չի կրում սեփական հարկերը վճարելու համար, այլ այն կատարվում է հարկային գործակալի միջոցով:<sup>3</sup> Ի լրումն, կարելի է պնդել, որ կառավարությունը՝ դիտավորյալ լռություն պահպանելով, քաղաքացիներին միտումնավոր կերպով տեղյակ չի պահել բարեփոխումների **ՈՂՋ** փաթեթի հետևանքները՝ սոցիալական գովազդներում ներկայացնելով միայն սկզբնական փուլի «գրո հետևանք մեխիզը»: Սա ևս կարող է բացատրել քաղաքացիների կողմից նախկինում դրույքաչափի բարձրացմանը չարձագանքելու փաստը:

## **2.2 Սկզբունքներ**

Փաստենք, որ հարկային բեռն ավելացել է համեմատաբար անաղմուկ, անխոչընդոտ և խիստ «գրագետ» հաղորդակցային ռազմավարությամբ: Կիրառվել են որոշակի հնարքներ, գործիքներ, որոնց հիմքում դրվել են հետևյալ սկզբունքները՝

- **Քաղաքացու եկամուտները չեն նվազում.**
- **Պետական բյուջեի մուտքերը չեն նվազում.**
- **Գործատուների համար լրացուցիչ բեռ չի առաջանում:**

---

<sup>3</sup> Աշխատավարձի ավելացման հետ կապված մի կողմնակի արդյունք էլ կարելի է սպասել. սրանով փաստացի կարող է որոշակի ժամանակահատվածում սահմանափակվել նաև աշխատողի վաստակի աճի պոտենցիալը տվյալ գործատուի մոտ, քանի որ գործատուները միառժամանակ «պարտավորված չեն զգա» մտածելու աշխատավարձի աճի մասին՝ պնդելով, որ արդեն մի անգամ դա արել են: Այսպիսի էֆեկտ կարող է նաև դիտարկվել պետական հատվածի՝ հաջորդ տարի սպասվող աշխատավարձերի աճի պարագայում: Այդուհանդերձ, այս դիտարկումը լրացուցիչ ուսումնասիրման ու հաստատման կարիք ունի:

Փաստացի, այս սկզբունքները մեծամասամբ բավարարվել են (գործատուների դեպքում՝ որոշ վերապահումով), և բոլոր երեք կողմերն առանց լուրջ խնդիրների ընդունել են նոր կանոնները: Սակայն եռանկյունու մի կողմի՝ քաղաքացիների համար ստեղծվել է էականորեն նոր, ավելի վատթար իրավիճակ, երբ իր կողմից նախկինում կատարվող սոցիալական վճարներն այլևս չեն երևում՝ հավասարեցնելով դրանք հարկի հետ և «տարալուծելով» եկամտային հարկի մեջ:

### **2.3 Միասնական եկամտային հարկը**

Երեք էական հարցեր պետք է դիտարկել կապված եկամտային հարկի մեջ սոցիալական վճարների «տարալուծման» հետ, կամ այսպես կոչված «միասնական հարկի» գաղափարը շրջանառության մեջ դնելու հետ:

Առաջին՝ եթե քաղաքացին ներկայումս այլևս չի կատարում սոցիալական վճարներ, ապա ի՞նչ իրավունքով, հիմքով է ներկայումս հաշվառվում նրա աշխատանքային կենսաթոշակի իրավունքը բաշխողական համակարգում, այսինքն՝ ստաժի հաշվարկումը: Չէ՞ որ սերունդների համերաշխության սկզբունքը ենթադրում է այդպիսի վճարումների կատարում: Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ 1974թ. և հետո ծնված անձինք չեն մասնակցելու այդ համակարգին, այդուհանդերձ 40 տարեկանից մեծ անձինք շարունակելու են մասնակցել այդ համակարգին: Ստացվում է, որ այդ 26% հարկի մեջ գոյություն ունի «ենթադրյալ սոցիալական վճարի» մասը, որի մասին քաղաքացիներին նպատակային ձևով չեն տեղեկացնում: Այդ մասի նկատմամբ կենսաթոշակային պարտադիր կուտակային բաղադրիչին մասնակցող անձը կորցնում է իր իրավունքները:

Երկրորդ՝ եթե հիմնավորումն այն է, որ դրա փոխարեն պետությունը տալու է 5%, ապա պետք է պաշտոնապես ընդունել, ամրագրել և քաղաքացիներին հաղորդել, որ այդ 5%-ը տալիս է ոչ թե պետությունը (ինչպես հնչեցվում է սոցիալական գովազդներով), այլ հենց նույն քաղաքացին, քանի որ կառավարությունը վերցնում է այդ մասը հենց նրանից (26%-ի մեջ քողարկված սոցիալական վճարի տեսքով) և ուղղում այն կենսաթոշակային հիմնադրամ: Ընդ որում, չկան համապատասխան երաշխիքներ, որ ամեն դեպքում պետությունն այդ 5%-ը մշտապես վճարելու է: Ստացվում է, որ ինչ-որ մի պահի պետությունը, ելնելով առկա միջոցներից, կարող է որոշում կայացնել կասեցնելու կամ դադարեցնելու այդ վճարումների կատարումը, այն դեպքում, երբ քաղաքացիները պետք է շարունակեն իրենց պարտավորությունների կատարումը: Առավել ևս, եթե քաղաքացին առաջացող տարբերությունը չվճարի, ապա պետք է տուգանվի. կարծում ենք, որ այստեղ մարդու իրավունքների խախտման տարրեր կան և ավելի խորը իրավական փորձաքննություն պետք է իրականացվի:

Երրորդ՝ պետք է քննադատական տեսակետից նայել հենց բուն «ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ» գաղափարին: Եթե մի հարկ արդեն միասնական է, ապա ենթադրվում է,

որ նախկինում այդ հարկի հետ ինչ-որ բան այն չի եղել, որով խախտված էր հարկի ամբողջականությունը կամ միասնականությունը: Սակայն փաստ է, որ նախկինում էլ գործող եկամտահարկը ՄԻԱՄՆԱԿԱՆ էր, իսկ սոցիալական վճարները որպես այդպիսին հարկ չեն համարվել: Այլապես, եթե դրանք ևս դիտարկենք որպես հարկ, ապա ստացվում է, որ կուտակային կենսաթոշակային բաղադրիչին կատարվելիք ապագա վճարները ևս պետք է հարկ դիտարկվեն, որի պարագայում եկամտի հարկման դրույքաչափը կկազմի 31% և ավելի: Եթե ցանկանում ենք այդուհանդերձ կիրառենք այդ հայեցակետը, ապա տրամաբանությունը հուշում է, որ խոսք կարող է գնալ միայն «ՄԻԱՄՆԱԿԱՆ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ»-ի մասին, այսինքն նախկինում տարբեր վճարներ էին, ավելի վաղ դրանք հավաքվում էին տարբեր պետական կառույցների կողմից, տարբեր վարչարարությամբ և այլն, իսկ հիմա այդ ամբողջը «ՄԻԱՄՆԱԿԱՆԱՑՎՈՒՄ» է, և վարչարարությունը միասնական կերպով է իրականացվում: Այսինքն, պետք է շեշտել, որ հայեցակարգային առումով ևս «Միասնական եկամտային հարկ» գաղափարը շինծու է, և այն լիովին արտացոլում է բարեփոխման չհայտարարված, բայց և բուն «թաքցված» նպատակը՝ **եկամտի հարկում ավելացված դրույքաչափով**, որը, ինչպես նշվեց, բացարձակապես որևէ աղերս չունի (և չպետք է ունենա) կենսաթոշակային բարեփոխման հետ:

#### **2.4 Հարկման արդարությունը**

Դարձնելով հանրապետությունում եկամուտների հարկման դրույքաչափը 26%՝ առաջացել է անհամամասնություն շահութահարկի և եկամտային հարկի դրույքաչափերի միջև: Այդ քայլով կառավարությունն անհավասար, անտեղի և սխալ վարքագծային ազդակներ է տալիս տնտեսությանը, այն է՝ ավելի ձեռնտու է զբաղվել բիզնեսով և մուծել ընդամենը 20% շահութահարկ, քան լինել վարձու աշխատող և վճարել 26% եկամտային հարկ՝ գումարած առնվազն 6% (զուտ տնօրինվող եկամտի հաշվարկով) կենսաթոշակային հատկացումներ: Սա անտեղի միջամտություն է, որը խեղաթյուրում է մարդկանց տնտեսական հարաբերությունների մեջ մտնելու վարքագծերը: Եթե նպատակ է դրվել այս եղանակով խթանելու գործարարների քանակը երկրում, ապա ընտրվել է սխալ ու անարդարություն ծնող գործիք, առավել ևս, որ կասկածելի է նաև դրանով գործարարությունը զարգացնելու հնարավորությունները. անձը պետք է որոշում կայացնի զբաղվելու գործարարությամբ կամ ընդգրկվի այլ տեսակի տնտեսական հարաբերությունների մեջ ոչ թե հիմքում ունենալով այն խթանը, որ բիզնեսն ավելի քիչ է հարկվում, քան վարձու աշխատանքը, այլ համաձայն իր գիտելիքների, հմտությունների, միջոցների առկայության, ձեռնարկատիրական ռիսկ վերցնելու պատրաստակամությամբ և այլն:

Հաշվի առնելով, որ այս դատողությունները պարզ են և հասկանալի շատերին՝ կարելի է պնդել, որ կառավարությունը կիրառելով եկամտային հարկի 26% դրույքաչափը՝ որոշ ժամանակ անց կվերացնի այդ անարդարությունը՝ այս անգամ արդեն բարձրացնելով նաև շահութահարկի

դրույքաչափը: **Հերևաբար, տվյալ փուլում եկամտային հարկի դրույքաչափի բարձրացման հարցը պետք է մտախոհի նաև գործարար հասարակությունը:**

### **3. Եզրակացություններ և առաջարկություններ**

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ կենսաթոշակային բարեփոխման՝ հարկային մասի հիմնական իրական նպատակը չի առնչվում կենսաթոշակային բարեփոխումների հետ, իսկ **իրական նպատակ է հանդիսացել քողարկված և հնարամիտ ձևով քաղաքացիների եկամուտների հարկման դրույքաչափի բարձրացումը**, այն յուրահատկությամբ միայն, որ այդ բարձրացման ազդեցությունը հետաձգվել է մեկ տարով, հավանաբար հնարավոր դիմադրության ուժը մեղմելու և մարդկանց փաստի առաջ կանգնեցնելու նպատակով: Նույնիսկ ընդունելով այն հավանականությունը, որ եթե հաշվարկները ցույց էին տվել, որ ՀՀ կենսաթոշակային նոր համակարգի կայունության և շարունակականության ապահովման համար անհրաժեշտ էր ավելացնել այդ բեռը, այդուհանդերձ այն բացարձակ կամայականությունն ու խորամանկությունը, որով այն իրականացվեց, խորթ է պատասխանատու, հաշվետու և արդար կառավարման սկզբունքներին:

Անարդար ձևով, կամայականորեն ու արհեստականորեն կապակցելով կենսաթոշակային բարեփոխումները հարկային դրույքաչափի ավելացման հետ և շեշտադրվելով դրա շնորհիվ լուծվող հարկային վարչարարության խնդիրները՝ սկզբնապես արդեն իսկ վատ կարծիք է ձևավորվել և մեծ դժգոհություններ են առաջացել նոր կենսաթոշակային կուտակային համակարգի նկատմամբ, այն դեպքում, երբ այդ մոդելը, դրա գործունեության ինստիտուցիոնալ կառուցակարգերն ու ընթացակարգերն ընդունելի են և չպետք է հարցեր առաջանային այդ համակարգի առավելությունների հարցում:

Ելնելով վերը շարադրվածից՝ քաղաքականության և հայեցակարգային առումով առաջարկվում է.

- 1) **Սկզբունքորեն**, անընդունելի համարել կենսաթոշակային բարեփոխումների ենթատեքստում հարկերի դրույքաչափերի հետ կապված խնդիրների դիտարկումն ընդհանրապես, և եկամտի հարկման դրույքաչափի բարձրացումը՝ մասնավորապես: Միակ կապը վճարների հավաքագրումն ու դրա հետ կապված վարչարարական հարցերն են, որոնք չեն առնչվում դրույքաչափերի որոշման հետ:
- 2) **Սկզբունքորեն**, անընդունելի համարել նախկին սոցիալական վճարների «տարալուծումը» եկամտային հարկի մեջ, քանի որ դրանք միմյանց հետ առնչություն չունեն բովանդակային իմաստով. դրանք համասեռ կատեգորիաներ չեն: Ներկայիս եկամտային հարկը **չի կարող և չպետք է փոխարինի նախկին եկամտահարկին և սոցիալական վճարներին**, ինչպես որ սահմանված է օրենքով և իրագործվել է այսպես կոչված միասնական եկամտային հարկի պարագայում:



3) Կենսաթոշակային կուտակային համակարգի ներդրումը ընդունելի լինելով հանդերձ՝ դրա իրականացման ձևը, մասնավորապես եկամտային հարկի դրույքաչափի հետ դրա կապակցումը և դրա ենթատեքստում հարկման դրույքաչափի ավելացումը համարել **անընդունելի**: Պետք է ընդունել բարեփոխումների միասնական սկզբունքներ և ապահովել դրանց ամբողջականությունը բարեփոխման իրականացման բոլոր փուլերում: Այսինքն, 2.2 կետում նշված սկզբունքները, թե, մասնավորապես՝ «**Քաղաքացու եկամուտները չեն նվազում**», պետք է կիրառվեն ամբողջապես, ոչ միայն կենսաթոշակային բարեփոխման հարկային մասում, այլ նաև մյուս փուլերում ևս:

Որպես լուծում, ստորև ներկայացվում է քաղաքականության փոփոխության հետևյալ տարբերակը՝

**Վերադառնալ եկամտային հարկի նախկին 20% դրույքաչափին՝ դրա ներկայիս դրույքաչափի մնացած մասը (26%-ի դեպքում՝ 6%-ը) ուղղելով հենց պարտադիր կուտակային բաղադրիչին:**

*Այս պարագայում 2.2 կետում նշված բոլոր սկզբունքները մեծ հաշվով ապահովվում են՝ գործադուրի վրա լրացուցիչ բեռ չի առաջանում, քաղաքացու զուտ տնօրինվող եկամուտը չի նվազում, պետական բյուջեի մուտքերի նվազումը հավասարակշռվում է բյուջեի ելքերի նվազեցմամբ՝ բյուջեից նախատեսված 5% մասհանումների վերացման շնորհիվ: Ըստ էության, սրանով կվերականգնվի քաղաքացիների՝ միասնական եկամտային հարկում տարալուծված սոցիալական վճարների նկատմամբ իրենց պարտավորությունները և իրավունքները (սակայն դրանց իրացումն արդեն ապահովելով կուտակային, ոչ թե բաշխողական համակարգի շնորհիվ), որոնք իրենցից հարկային բնույթ չկրելով՝ անարդարացիորեն և կամայական կերպով դարձել են հարկ և «կցվել» եկամտային հարկին:*